



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«06» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 184 - 24

Նախաձեռնող՝

«Լաոջ Էներջի» ՍՊԸ

ք. Երևան, Դավթաշեն, Եղվարդի խճ. 111, մասնաշենք 5

Գործունեությունը՝

Արարարի մարզի Արարար համայնքի

Լանջառ բնակավայրի Զ.Անդրանիկի 1/1 հասցեում

արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում

Արարարի մարզ, Լանջառ բնակավայր

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 184 - 24

«06» սեպտեմբեր 2024 թ.

Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի Ջորավար Անդրանիկի 1/1 հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Լառջ էներջի» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնք Լանջառ բնակավայր

Ներածական մաս. «Լառջ էներջի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Արարատի մարզի Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի Ջորավար Անդրանիկի 1/1 հասցեում ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 7,00001 հա տարածքում տեղակայել ֆոտովոլտային արևակայան: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի մարտի 29-ի № 69-Ա որոշման համաձայն՝ «Լառջ էներջի» ՍՊԸ-ին տրամադրվել է 4500 կՎտ հզորությամբ արևային կայանի կառուցման թույլտվություն՝ մինչև 2045 թվականի մայիսի 18-ը գործողության ժամկետով: Արևակայանի կառուցման համար Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականի ապրիլի 10-ին տրվել է № 55 նախագծման թույլտվությունը: Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետի՝ «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:

Նկարագրական մաս. Արևակայանի տեղակայման վայրը գտնվում է Արարատի մարզի Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի վարչական տարածքում՝ հանրապետական ավտոճանապարհից՝ 0,2 կմ, տեղական ավտոճանապարհից՝ 0,7 կմ, միջպետական ավտոճանապարհից՝ 0,5 կմ, Լանջառ բնակավայրից՝ 0,2 կմ, Ուրցալանջ բնակավայրից՝ 2,6 կմ, մոտակա գետից՝ 2,6 կմ հեռավորության վրա: Արևակայանի տեղաբաշխման վայրն ընտրվել է՝ հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում անվտանգության ենթակառուցվածքները: Համաձայն հաշվետվությունում



հիդրոերկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ ստորգետնյա ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոններում, գրունտային ջրերի տեղամասեր չեն բացահայտվել և ըստ ֆոնդային նյութերի տվյալների՝ դրանք գտնվում են 10 մ-ից խորը հորիզոններում, իսկ ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են:

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված չէ, տեղ-տեղ տափարակ է, ծառերը և թփերը բացակայում են, բնորոշ է սևահողային ծածկույթը, առկա է խոտածածկ: Տարածքին հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով, նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Համաձայն նախագծի՝ նախատեսվում է կառուցել 5,065 ԿՎտ պիկային առավելագույն հզորությամբ (հաստատուն հոսանքի) ֆոտովոլտային կայան: Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 8372 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 605 Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 18 հատ 250 կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանալու են ենթակայանի 0,8 կՎ լարմամբ գլխավոր ընդունիչի վահաններին: Վահանակների զբաղեցրած մակերեսը կազմելու է 5 հա: Արևային կայանի տարածքում կառուցվելու է 6300 կՎԱ հզորությամբ 35/08 կՎ լարմամբ ենթակայան՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն: Ենթակայանը միացվելու է «Լանջառ» 35 կՎ լարմամբ օդային գծի միջանկյալ հենարանների հենամիջում նոր տեղադրված խարսխային հենարանին՝ 300 մ երկարությամբ 35 կՎ լարմամբ էլեկտրահաղորդման գծով: ՕԳ հաղորդալարերի նվազագույն հեռավորությունը հողի մակերևույթից նախատեսվել է ոչ պակաս 7 մ-ից: Յուղի հեռացման նպատակով տրանսֆորմատորի տակ կառուցվելու է 1 հատ 16,6 տ տարողությամբ բետոնե յուղընդունիչ (հոր): Տարածքում տեղադրվելու է 5 մ x 5 մ չափերի մետաղական փակ շինություն՝ խոտանված մասերի և գործածությունից դուրս եկած վահանակների ժամանակավոր պահման համար: Արևակայանի տարածքը ցանկապատվելու է 2 մ բարձրությամբ մետաղացանցով, իսկ ենթակայանի տարածքը՝ 2,3 մ բարձրությամբ, 9 մ երկարությամբ և 9 մ լայնությամբ ցանկապատով:

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու և տարածքի ջրցանման նպատակով: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շէրով, իսկ ջրցանի և գրունտի խոնավացման համար անհրաժեշտ տեխնիկական ջուրը՝ պայմանագրային հիմունքներով՝ ջրցան մեքենաներով: Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրերի հեռացման համար տեղադրվելու է 2 շարժական բիոզուգարան՝ վացարանով: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Օդային ավազանի պահպանության նպատակով նախատեսվում է արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհի շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավացում, ճանապարհի ջրցան՝ ըստ անհրաժեշտության: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին շինանյութերի և աղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով:



տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ, տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, պարբերաբար իրականացվելու են ստուգումներ, ամբողջ տարածքը ցանկապատվելու է:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա էական ազդեցություններ չեն կանխատեսվում:

Շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով նախատեսվել են մի շարք միջոցառումներ: Նախքան բերրի շերտը հանելը՝ հողի մակերեսը մաքրվելու է խոշոր քարերից, թփերից, կոճղերից, բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվելու են միջոցներ, որոնք կբացառեն դրա որակական հատկանիշների վատթարացումը, ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերի վրա կատարվելու է խոտաբույսերի ցանք կամ դրանք ամրացվելու են և ծածկվեն անջրթափանց թաղանթով, հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում, գործունեության վայրում ազատ տարածքներում հնարավորինս պահպանվելու են խոտածածկ հատվածները: ՕԳ-ի, մալուխագծի կառուցման ավարտից հետո անմիջապես իրականացվելու է համայնքային հողերի վերականգնում:

Ապագա արևակայանի տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները: Գործունեության և հարակից տարածքներում իրականացվելու է մշտադիտարկում և ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում ընկերությունը նախատեսել է պահպանության միջոցառումներ, շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում գոյություն ունեցող կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար, կենդանիների տեղաշարժին չխանգարելու նպատակով խախտված հողաշերտը հնարավորինս արագ վերականգնվելու է: ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա տեղակայվելու են հակաթռչնային արգելափակոցներ՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով, հնարավորինս նվազեցվելու է տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների բնականոն կենսակերպին չխանգարելու նպատակով:

Թափոնների կառավարման նպատակով նյութերի մնացորդները և շինարարական թափոնները՝ շինադք, բետոնի մնացորդներ և այլն հավաքվելու են պարկերի մեջ և տեղափոխվելու են համայնքապետարանի կողմից հատկացված վայր, կենցաղային ադբը տեղափոխվելու է ադբավայր՝ համայնքի ղեկավարի համաձայնությամբ, շինարարության ժամանակ առաջացած յուղոտված լաթերը կամ պարկերը, մետաղական մասերի և նյութերի մնացորդները, հնարավոր վթարների դեպքում՝ յուղընդունիչում հավաքված յուղը, յուղային նյութեր պարունակող մասերը հանձնվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին: Կատարվելու է գործունեության ընթացքում առաջացող բոլոր թափոնների սկզբնական հաշվառում:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է շինարարական աշխատանքները և տրանսպորտի



տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում, բացառել աղմուկ և թրթռում առաջացնող մի քանի տեխնիկայի միաժամանակյա աշխատանքը, պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:

Շինարարական աշխատանքների կատարման և շահագործման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվել են մի շարք միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի և օգտագործված ճանապարհների բարեկարգում, հարթեցում, թափոնների հեռացում, հնարավորինս նախնական տեսքի վերականգնում

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունը վերահսկելու նպատակով կատարվելու են.

1. արևակայանի տեղակայման տարածքում և հարակից տարածքներում մթնոլորտային արտանետումների (փոշի, ծխագազեր) մշտադիտարկումներ՝ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամսական մեկ անգամ,

2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,

3. շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

4. հողի որակի մշտադիտարկում և բուսահողի պահպանման նորմերի վերահսկում՝ պարբերաբար,

5. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամենօրյա, շաբաթական մեկ անգամ,

6. արևակայանի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ պարբերաբար:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր բնակավայրում (Լանջառ) անցկացվել է հանրային լսում, որի ընթացքում մասնակիցները համաձայնություն են տվել արևակայանի կառուցման վերաբերյալ: Շինարարության փուլում բացվելու է մոտ 31, շահագործման փուլում՝ 3-5 աշխատատեղ: Նախաձեռնողը պարտավորվել է աշխատանքների իրականացմանը ներգրավել համայնքի բնակիչներին, ինչպես նաև մասնակցել համայնքի զարգացման ծրագրերի իրականացմանը, ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար:

Արևային էլեկտրակայանների ներդրումը էներգետիկ համակարգում համարվում է ամենահեռանկարային և էկոլոգիապես մաքուր այլընտրանքային ճյուղը: Արևային էներգիան համարվում է լավագույն այլընտրանք, քանի որ վերականգնվող ռեսուրս է և ջերմոցային գազերի արտանետումների տեսանկյունից նախընտրելի:

Ջրօգտագործումն ու ջրահեռացումն իրականացվելու են պայմանագրային հիմունքներով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով ՇՄԱԳ-ում նախատեսվել են համապատասխան միջոցառումներ՝ հողի բերրի շերտի հանում և պահպանում ծածկված



վիճակում, հողի վրա թափոնների և շինարարական աղբի տեղադրման բացառում, շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորում և սպասարկում մասնագիտացված կետերում և այլն:

Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Գործունեության ընթացքում իրականացվելու է գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառում:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվետվությունը լրամշակելիս հաշվի են առնվել ընկերության կողմից:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական պահանջներ

Անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը.

1. շինարարության փուլում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (շինարարական հրապարակը ցանկապատել, ջրցանել, սորուն նյութերը և հողային զանգվածները ծածկել անթափանց թաղանթով, բացառել շինարարական աղբի կուտակումները տարածքում և այլն),

2. արևակայանի (էլեկտրական ցանցեր, ենթակայան, բաշխիչ սարքավորումներ, օդային գիծ) կառուցման և շահագործման ընթացքում անվտանգության գոտու ապահովման նպատակով առաջնորդվել Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի N 363 որոշման պահանջներով, էլեկտրահաղորդման գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքներն իրականացնել տեխնիկական կանոնակարգին համապատասխան,

3. շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, շահագործման փուլում առաջացող վտանգավոր թափոնները (յուղոտված լաթեր, բանեցված տրանսֆորմատորային յուղեր և այլն) պահեստավորել փակ ծածկով տարածքում, իսկ շարքից դուրս եկած արևային պանելները վերադարձնել դրանք տրամադրող կազմակերպությանը,

4. հողի բերրի շերտի օգտագործումն ու պահպանությունն իրականացնել հաշվետվությունում նկարագրված եղանակով՝ առաջնորդվելով Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 1404 և 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1396-Ն որոշումների պահանջներով,



5. շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի բարեկարգում, մաքրում շինարարության հետևանքով առաջացած նյութերի մնացորդներից,

6. առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության նպատակով, բացառել ծառահատումները,

7. իրականացնել օգտագործված ճանապարհների բարեկարգում, բացառել նոր ճանապարհների կառուցումը,

8. ապահովել հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը (օդի որակ, հողի որակ, կենսաբազմազանություն, աղմուկի և թրթռման մակարդակներ, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ և այլն),

9. աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջներով:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Լառջ էներջի» ՍՊԸ-ի կողմից Արարատի մարզի Արարատ համայնքի Լանջառ բնակավայրի Զորավար Անդրանիկի 1/1 հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Քրիստինե Հարությունյան